

K O M I T A S M U S E U M - I N S T I T U T E

**C O L L E C T I N G T H E S E E D S
M I H R A N T O U M A J A N**

1 8 9 0 - 1 9 7 3

C A T A L O G U E A N D A R T I C L E S

Curator: Nairi Khatchadourian
Editor: Gayane Amiraghyan

Yerevan, 2018
Publication of Komitas Museum-Institute

Կ Ո Մ Ի Տ Ա Ս Ի Թ Ա Ն Գ Ա Ր Ա Ն - Ի Ն Ս Տ Ի Տ Ո Ւ Տ

Հ Ա Ս Կ Ա Ք Ա Ղ
Մ Ի Հ Ր Ա Ն Թ Ո Ւ Մ Ա Ճ Ա Ն
1 8 9 0 - 1 9 7 3

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Գ Ի Ր Ք Ե Վ Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ն Ո Դ Կ Ա Շ Ն Ե Ր

Համադրող՝ Նայիրի Խաչատուրեան
Պատասխանատու խմբագիր՝ Գայանե Ամիրադյան

Երևան, 2018
Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատարակչություն

ՀՏԴ 78
ԳՄԴ 85.31
Հ 363

Հ 363 Հասկաքաղ. Միհրան Թումաճան (1890-1973):
Ցուցադրության պատկերագիրք և գիտական հոդվածներ. - Եր.:
Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատարակչություն, 2018. - 212 էջ:

ՀՏԴ 78
ԳՄԴ 85.31

Տպագրված է «Նուշիկյան պրինտ» տպարանում
ISBN 978-9939-9134-7-6
© Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, 2018
© Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատարակչություն, 2018

Հրատարակվում է
Կոմիտասի թանգարան-ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Գայանե Ամիրադյան (ա.գ.թ.)
Խմբագրական խորհուրդ՝
Միեր Նավոյան (ա.գ.դ.)
Նիկոլայ Կոստանդյան (ա.գ.թ.)
Տաթևիկ Շախկուլյան (ա.գ.թ.)
Նանե Միսակյան
Նայիրի Խաչատուրեան

Անգլերեն տեքստերի սրբագրիչ՝
Լորենս Այվազյան

Գրքի ձևավորող՝
Սարգիս Անտոնյան

Ձայնասկավառակի հնչյունային ռեժիսոր՝
Արմեն Փարեմուզյան



ՀՀ մշակույթի նախարարություն
Ministry of Culture of RA

Կոմիտասի թանգարան-ինստիտուտ
Komitas Museum-Institute

Սույն երկլեզու (հայերեն, անգլերեն) ժողովածուն պարունակում է «Հասկաքաղ. Միհրան Թումաճան (1890-1973)» ցուցադրության ցուցանմուշների պատկերագիրքը և գիտական հոդվածներ, որոնք անդրադառնում են Միհրան Թումաճանի կյանքին ու գործունեության ճյուղերին, Նրա երաժշտագիտական և բանահավաքչական ժառանգության առանձին դրսևորումներին: Գրքին կից ձայնասկավառակում ներառված են Թումաճանի գրառած երաժշտաբանահյուսական նմուշների արխիվային և Նոր կատարումներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENT

- 8 Նախաբան
Preface
- 12 Երախտագիտության խոսք
Acknowledgements
- 14 Միհրան Թումաճան (1890-1973)
Mihran Toumajan (1890-1973)
- 30 Պատկերագիրք
Catalogue
- 136 Մ. Թումաճան. զեկուցումներ,
դասախոսություններ և ակնարկներ
M. Toumajan: Papers, Lectures, and Notes
- 146 Հոդվածներ
Articles

- 149 **Խմբագրի կողմից**
- 150 **Զավեն Թագակչյան**
Միհրան Թումաճանի բանահավաքչական գործունեությունը
- 154 **Սաթենիկ Ղափլանյան**
Միհրան Թումաճանի հրապարակախոսական-երաժշտագիտական գործունեությունը
- 159 **Անի Հակոբյան**
Օրորները Միհրան Թումաճանի հավաքածուում
- 164 **Մարիաննա Տիգրանյան**
Հարսանեկան «Զնգլիկ»-ները Միհրան Թումաճանի ձայնագրություններում
- 173 **Մարգարիտ Սարգսյան**
«Էս գիշեր Համբարձում է» պարերգը Միհրան Թումաճանի գրառումներում
- 180 **Տաթևիկ Շախուլյան**
«Ափսոս ու խագար ափսոս» վիպերգի թումաճանական պատառիկը
- 184 **Լիլիթ Հարությունյան**
Ժողովրդական հոգևոր երգերը Կոմիտաս Վարդապետի և Միհրան Թումաճանի գրառումներում
- 190 **Տորք Դալալեան**
Պտուղների խորհրդանշական պատկերների բանագիտական քննություն (ըստ Միհրան Թումաճանի «Հայրենի երգ ու բան»-ի նիւթերի)
- 199 **Տիգրան Թումաճան**
Հօրեղբայրս (մտերմիկ խոհեր եւ յուշեր)
- 201 **Ալինա Փահլևանյան**
Հայ ֆուլկլորագիտության նվիրյալը

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐԸ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՎ ՄԻՆՐԱՆ ԹՈՒՄԱՃԱՆԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

Լիլիթ Հարությունյան

Կոմիտասի թանգարան-ինստիտուտ
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

Հայ մոնոդիկ երաժշտության երկու կարևոր ճյուղերը՝ ժողովրդական ստեղծագործությունն ու հոգևոր մասնագիտացված երաժշտությունը, վերջինիս ծագման շրջանից մինչև մեր օրերն ունեցել են փոխազդեցությունների ու կապերի յուրահատուկ դաշտ: Բացի նրանից, որ հոգևոր երաժշտությունը ձևավորվել է հայ ժողովրդական երգաստեղծության հիմքի վրա¹, իր զարգացման ընթացքում հաճախ այն սնվել է հայկական ժողովրդական երգամտածողությունից, երբեմն էլ ժողովրդական բանահյուսությունն իր տարբեր դրսևորումներով արտացոլել է ժողովրդի կրոնական պատկերացումները: Սակայն, եթե խոսվում է հոգևոր երաժշտության՝ ֆոլկլորից փոխառությունների մասին, հիշատակվում է Նախնա-նաջ մեղեդիական կողմը, իսկ հակառակ դեպքում, երբ հոգեվորը հանդես է գալիս ժողովրդական երգաստեղծության մեջ, դրա հիմնական դրսևորումը երևում է երգերի բանաստեղծական տեքստերում: Հայտնի է, որ հայ ժողովրդական երաժշտությանը վերաբերող մի շարք հարցեր քննարկելիս հիմնական տեղ ունեն երգի բանաստեղծական տեքստը, դրա տաղաչափական առանձնահատկություններն ու իմաստային բնութագիրը:

Առհասարակ, երաժշտական բանահյուսության մեջ հոգեվոր տարրերի առկայության խնդրին որոշակի անդրադարձներ կան Ջավեն Թագակչյանի² աշխատանքներում:

Հոգևորի տարրեր պարունակող ժողովրդական երգերը մեծ քանակություն են կազմում հայկական ժողովրդական երգերի ողջ զանգվածում ու պատկանում են ֆոլկլորային ամենատարբեր ժանրերին:

Դիտարկելով նշված երաժշտական նյութը և առաջնորդվելով բանաստեղծական տեքստի բովանդակային հիմքը որպես մեկնակետ դիտելու սկզբունքով՝ կարողացանք առանձնացնել հոգևոր թեմատիկան այս կամ այն չափով արտացոլող ժողովրդական երգերի երեք հիմնական շերտ:

- Դրանք են՝
- հոգևոր թեմատիկան ակնարկող ժողովրդական երգեր,
 - մասնագիտացված հոգևոր երգերի ժողովրդականացված տարբերակներ,
 - ժողովրդական հոգևոր երգեր:

Հոգվածում ներկայացված է Կոմիտաս Վարդապետի «Երաժշտական-ազգագրական ժառանգությունը» (6 հատոր)³ և Միհրան Թումաճանի «Հայրենի երգ ու բան» (4 հատոր)⁴ ժողովածուներում ընդգրկված երաժշտական նյութի ուսումնասիրությունը:

Հոգևոր թեմատիկան ակնարկող ժողովրդական երգեր

Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության մեջ հոգևորի դրսևորման մեր դիտարկած մակարդակներից առաջինը մեծածավալ խումբ է կազմում: Այս երգերն առկա

¹Սողոմոն Ավագ Սարկվազ Սողոմոնյան, Հայրց եկեղեցական եղանակները, Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրություններ եւ յօրածներ, Գիրք Ա, աշխատասիրութեամբ Գուրգէն Գասպարեանի եւ Մարինէ Մուշեղեանի, Երեւան, «Սարգիս Խաչէնց», 2005, էջ 55, Հայ ժողովրդական եւ եկեղեցական երգերը (դասասնություն հ. Կոմիտաս վարդապետի), Նույն տեղում, էջ 329:

²Հայ ավանդական երաժշտություն մատենաշար, պրակ III, Երևան, «Ամբողջ գրուպ», 2008, էջ 213-214, Զ. Թագակչյան, Տաղերի ժողովրդական կատա-

րումները Ջավախքի երաժշտական կենցաղում, Կոմիտասը և ավանդական երաժշտական մշակույթը, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տարեգիրք, հատ. Բ, պատասխանատու խմբագիր՝ Տ. Շախկոյան, Երևան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., 2017, էջ 164-181:

³Կոմիտաս, ԵԺ, հատ. 9-14:

⁴Թումաճան, 2ԵԲ, հատ. 1-4:

են գրեթե բոլոր ազգագրական ժողովածուներում: Կարելի է ասել, որ այդ հանգամանքը փաստում է հոգևորի ընդգծված կարևորությունը հայ ժողովրդական մտածողության մեջ:

Եթե նկատի ունենանք, որ մեր դիտարկման համար առաջնային նշանակություն ունի երգի բանաստեղծական տեքստը, ապա օրինանքների, սրբերի, սրբավայրերի, եկեղեցական տոների հիշատակումները, հոգևոր բնույթի բանաձևումները թույլ են տալիս ընդգրկել ժողովրդական երգերը մեզ հետաքրքրող շրջանակի մեջ: Այս հիշատակումները, սակայն, երգերի ժանրային ու բովանդակային նկարագիրը չեն փոխում:

Չոգևոր թեմատիկան հիշատակող երգերն ունեն ամենատարբեր ժանրային նկարագիր: Այս խմբում յուրահատուկ տեղ ունեն ծիսական երգերը, որտեղ հոգևոր թեմատիկան, բացի լոկ հիշատակվելուց, երբեմն կարող է նաև ավելի էական տեղ զբաղեցնել: Չոգևոր տիպի բանաձևումներով հարուստ են հատկապես հարսանեկան երգերը: Այստեղ տեսնում ենք օրինանքներ, մաղթանքներ, համեմատություններ քրիստոնեական խորհրդանիշների հետ:

Ծիսական երգերի թվում շատ են այնպիսիք, որոնք նվիրված են հենց եկեղեցական տոներին կամ կենցաղային ծեսերի կրոնական կողմն են նկարագրում: Այդ երգերին կանդրադառնանք ստորև:

Չոգևոր տիպի բանաձևումներ, սրբավայրերի անուններ և այլ հիշատակումներ հաճախ կարելի է հանդիպել պարբերներում: Սակայն այստեղ բովանդակության կառուցման մասին խոսելիս պարտադիր է հիշել, որ պարբերի յուրաքանչյուր տուն (խաղիկ) կարող է վերցված լինել մեկ այլ պարբերից, փոխարինվել կամ հորինվել տեղում: Այդուհանդերձ, կան ուսումնասիրողներ, որոնք համարում են, որ պարբերներն ունեցել են կամ կենցաղային-կիրառական (աշխատանքային պարբեր), կամ ծիսական-պաշտամունքային գործառույթային դաշտ⁵: շեռտաբար, պատահական չէ, որ քրիստոնեական մշակույթը ևս հաճախ արտահայտվել է պարբերների բովանդակության մեջ:

Չոգևորի տարրն առկա է նաև պատմական երգերում: Պատմական երգերի միջոցով ժողովուրդը ներկայացնում է իր հետ տեղի ունեցած պատմական իրադարձությունները: Հարկավոր է նշել, որ այդ իրադարձությունները կարող են ունենալ համազգային նշանակություն, ինչպես նաև պատմել տեղային իրողությունների մասին:

Կենցաղային իրողություն նկարագրող և դրա հետ մեկտեղ հոգևոր թեմայի հիշատակություն պարունակող երգի օրինակ է ստորև բերված նմուշը Մ. Թումաճանի «Հայրենի երգ ու բան» ժողովածուից⁶.

⁵ Կոմիտաս Վարդապետ, շայ գեղջուկ պարը, Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրություններ եւ յօրուածներ, Գիրք Ա, էջ 291-292, С. Лисициан, Армянские старинные пляски, Ереван, изд. АН Армянской ССР, 1983, с. 69.

⁶ Թումաճան, շեժ-2, թիվ 20, էջ 45-46:

ԵՍ ԵՍ ՏԵՂԱՆ



Այս երգի տարբերակներ Մ. Թումաճանը գրառել է Սարգիս Վահունուց, Պողոս Խենգետյանից, Վարդանուշ Գըլպաչյանից: Ըստ Թումաճանի՝ «այս երգը, թեև որոշ չափով հեզնական է, ... բայց երաժշտական առումով հետաքրքրական է, որովհետև եղանակը վերցված է եկեղեցու հատուկ սաղմու կատարելու փոխասացությունից»:

Առասպելական երգերի թվին դասված⁸ երգանմուշներին է «Սուրբ Կարապետ» երգերից մի օրինակ՝ «Սուրբ Կարապետն երգան-երգան»⁹: Սբ. Կարապետին (կամ Նովիաննես Մկրտչին) նվիրված երգերի մեծ մասը պատկանում է հենց հայ ժողովրդական հոգևոր երգերի խմբին և կքննարկվի հետագա շարադրանքում: Սակայն այս օրինակն ըստ իր տեքստային բովանդակության առավել հարում է պատմական երգի ժանրին. այստեղ նկարագրվում են Սբ. Կարապետի հրաշագործություններն ու բարությունը: Ռոբերտ Աթայանն այս երգը ծանոթագրում է որպես «դաստան»¹⁰, որտեղ «մեկը մյուսին գերազանցելով, թվարկվել են ու գովաբանվել նրա արդարամիտ արարքներն ու շնորհները»¹¹: Կարծում ենք՝ այս երգը կարող է նաև դասակարգվել որպես գերբնական իրողությունների մասին պատմող վիպական երգ:

⁷ Նույն տեղում, էջ 217:

⁸ Կոմիտասի երկերի ժողովածուի 10-րդ հատորում ժողովրդական երգերը դասավորված են հետևյալ կերպ. պատմական երգերի թվին են դասվում նաև վիպական, առասպելական, վիպաքնարական երգերը: Կոմիտաս, ԵԺ-10, էջ 10: Սակայն պետք է նշել, որ արդի հայ ֆոլկլորագիտության մեջ այս բոլոր ենթաժանրերի երգերը հիմնականում դասվում են վիպական ժանրին:

⁹ Կոմիտաս, ԵԺ-10, թիվ 97, էջ 84:

¹⁰ Դաստանը աշուղական երաժշտական ժանրերից է, որը պարունակում է գովերգող բնույթի երգեր:

¹¹ Կոմիտաս, ԵԺ-10, էջ 181:

**ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ
ԵՐՋԱՆ-ԵՐՋԱՆ**

[Շնորհ, ազատ չափով. Largo, tempo rubato]

Սուրբ Կարապետն
երգանքն
դն - վեր ժող - վեց, ե - վից զնն - դաս:
կու - քան կել - նեմ քն - մոյն րա - կան:

Մեկ դն - վեց կար ի - նե, կան - չեց յա - ման:
մո - խիր տա - նեմ քա - վեմ վը - րո Բար - ման:

Վիպական երգերի մասին խոսելիս չի կարելի գոնե հպանցիկ չանդրադառնալ «Սասունցի Դավիթ» էպոսի այն երգվող հատվածներին, որտեղ հիշատակվում է հոգևոր թեմատիկան: Այստեղ նույնպես հոգևորը հիշատակվում է աստվածային օրհնության խնդրանքի ձևով, երբ, օրինակ, Դավիթը վերակառուցում է Մարութա Սբ. Աստվածածին վանքը կամ Աստծուց ուժ է խնդրում՝ Մարա զորքին հաղթելու համար: Հոգևորի արծարծման տեսանկյունից ակնառու են նաև Էպոսը սկսող «Ջողորմի»-ները¹²: Այստեղ արխայիկ հավատալիքներից եկող նախնիների պաշտամունքը ժամանակի ընթացքում քրիստոնեական երանգավորում է ստացել: Կարելի է գուցա-հեռներ տանել քրիստոնեական ծիսակարգում կարևոր տեղ զբաղեցնող «Տեր ողորմա»-ների¹³ հետ: Այստեղ մեկ առ մեկ հիշատակվում են էպոսի բոլոր կերպարները՝ ողորմի տալով կամ չտալով¹⁴:

Աշխատանքային երգերում ևս հանդիպում են հոգևոր թեմատիկան հիշատակող նմուշներ: Սկսած վաղնջական ժամանակներից՝ յուրաքանչյուր աշխատանքային գործընթաց, ինչպիսին, հատկապես, վարուցանքն է, իրենից մի յուրատեսակ ծիսակատարություն էր ներկայացնում: Ժամանակի ընթացքում աշխատանքային երգերում ևս (մասնավորապես, տղամարդկանց դաշտային աշխատանքների ժամանակ կատարվող երգերում) քրիստոնեությունն իր ազդեցությունն է թողել: Որպես օրինակ կարելի է հիշել բոլորին քաջ հայտնի Լուով Գութաներգի սկզբնատողը («շն: Օրինյալ է Աստված»)՝

¹² «Սասնա ծռեր» էպոսի այս կարևոր հատվածը Ռ. Աթայանը կոչում է «Ողորմիներ» (Հայկական սովետական հանրագիտարան, հ. 10, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1984, էջ 198-199, **Կոմիտաս**, ԵԺ-10, էջ 20):

¹³ Տվյալ դեպքում նկատի ունենք «Տեր, ողորմա» բառերի վրա հիմնված հակիրճ ասերգային դրվագները, այլ ոչ Ս. Պատարագի «Տեր, ողորմա» երգը:

¹⁴ **Կոմիտաս**, ԵԺ-10, թիվ 101-107, էջ 86-91: Այս կտորների վիպասացները Սոկրի Գինեկաց գյուղի բնակիչներ Ջատիկ Խապոյանն ու Նախտ Աբրահամյանն են:

¹⁵ Նույն տեղում, թիվ 1, էջ 43:

Դիտարկումները ցույց տվեցին, որ հոգևորի արտացոլանքը գրեթե բացակայում է կանանց (առտուհին) աշխատանքային երգերում: Բայց այն առկա է կանանց կատարման նյութ համարվող մեկ այլ ժանրի երգերում, որոնք երբեմն սխալամբ դասվում են աշխատանքային երգերի թվին: Խոսքը օրորների մասին է:

Ըստ Մարգարիտ Բրուսյանի՝ հոգևոր բնույթի «համեմատություններն ու զանազան հիշատակությունները ընդհանրապես հարստացնում են օրորների բովանդակությունը... լինեն դրանք անեծքներ, օրհնանքներ, մաղթանքներ ու գովքեր՝ կապված մանկիկի ապագա կյանքի հետ»¹⁶: Ահա մի օրորոցայինի քառյակ, որն իր մեջ պարունակում է հավատալիքի տարրեր. այստեղ զանազան «չարքերից» որդուն պահպանել ցանկացող մայրը դիմում է Սբ. Աստվածամոր օգնությանը.

**Օրոր, օրոր օրերող
Թա բերեմ չարերող
Չարիսական չարերդ խափանի,
Աստվածամարն արևդ պահի**¹⁷:

Հոգևոր բնույթի ակնարկներ պարունակող ժողովրդական երգերի ժանրային թվարկման վերջում որոշ վերապահումով հարկ ենք համարում անդրադառնալ նաև կատակերգերին: Հոգևոր թեմայով գրված կատակերգերի ամկայությունն ու մեծ քանակը վկայում է ժողովրդի կենցաղի կրոնական կողմի կարևորությունը: Կատակերգերում հաճախ նմանակվում է եկեղեցական երգելաոճը՝ առավել հարուստ պատկերայնություն ստանալու նպատակով: Այն հաճախ զուգորդվում է հստակ ռիթմավորված երաժշտական դարձվածքների հետ, որոնք նպաստում են բանաստեղծական խոսքի պարզ արտաբերմանը, սուր շեշտվածությանը:

Ահա այդպիսի կատակերգի մի ուշագրավ օրինակ¹⁸.

¹⁶ **Բ. Բրուսյան**, Հայ ժողովրդական ստեղծագործություն, Երևան, «Ամրոց գրուպ», 2014, էջ 195:

¹⁷ **Ռ. Գրիգորյան**, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Երեվան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1970, էջ 55:

¹⁸ **Կոմիտաս**, ԵԺ-10, թիվ 190, էջ 126:

**ԱՍՏՎԱԾ ԱՆԵՂ,
ԱՆԺԱՄԱՆԱԿ**

[Չափավոր. Moderato]

Աստ-ված ա - նեղ ան - ծա - մա - նակ, է - շքս սատ - կավ
 ա - ոսեց դա - նակ, է - շքս սատ - կավ, ե - լավ զը - նաց,
 սե - մե - րը պա - տեմ կախ մը - նաց: Սե-մե-րը մոլ - լին ծա - խե - ցի,
 խոնկ ա - ու հո - զին ծը - խե - ցի, Աստ-ված հար-ցնե մե - րոց:

Այս երգը գրառվել է Ախալցխայում: Ըստ Ռոբերտ Աթա-յանի՝ «Աստված անեղը» մի պարզամիտ ծաղր է, ուղղված եկեղեցու անձարակ սպասավորների որոշ ծիսակատարումներին¹⁹: Մեղեդին ունի ճկուն շարադրանք, կառուցվածքային առումով բաղկացած է երեք կրկնվող տիպի նախադասություններից ու լրացումից: Վերջին «Աստված հարցն մերոց» կեղծ եկեղեցական եզրափակումը նմանակում է հայ հոգևոր երգերի վերջավորություններին:

Եկեղեցականները միշտ էլ ուշադրության կենտրոնում են եղել և, երբեմն էլ չարդարացնելով իրենց կոչումը, սուր ծաղրի են ենթարկվել ժողովրդի կողմից: Պատահական չէ, որ անդրադարձները հոգևորականներին էական տեղ են զբաղեցնում հայ ժողովրդական կատակերգերի մեջ: Այսպիսի երգեր հանդիպում են ժողովրդական երգերի գրեթե բոլոր ժողովածուներում²⁰:

**ԷՍՈՐ ՄԵՐ
ՏԵՐՏԵՐ ԶԻԿ ԱԶԱԾ**

է - սոր մեր տեր - տեր զիկ ա - սաց,
 Ինչ խո - բո - տիկ թը - շիր ու - նես:
 ես էլ ա - սի մեր տեր - տե - րին,
 Բե - րա - ներ, թեր, թը - սե ե - նե:

¹⁹ Նույն տեղում, էջ 30:
²⁰ Բացի Կոմիտասի և Միհրան Թումանյանի գրառումներից՝ մի օրինակ և՛ «Աման, տերտեր, ամթա» վերնագրով, հանդիպել ենք Սպիրիդոն Մելիքյանի գրառած նմուշներում (տես Ա. Մելիքյան, *Հայ ժողովրդական երգեր և պարեր*, հատ. II, Երևան, Հայպետհրատ., 1952, թիվ 145, էջ 67):

Բացի նշված կատակերգերից՝ կան նաև այնպիսիք, որ կատարվում են պատմելով, իսկ ուղիղ խոսքը երգվում է²¹:

**Մասնագիտացված հոգևոր երգերի
ժողովրդականացված տարբերակներ**

Այս խումբն ընդգրկում է հոգևոր երգեր, որոնք իրենց կեն-ցաղավարումն են ստացել նաև ժողովրդի մեջ: Այն կարելի է բաժանել երկու ենթախմբի. հոգևոր երգերի ժողովրդակա-նացած տարբերակներ ու պարականոն հոգևոր երգեր:

Կոմիտաս Վարդապետի և Մ. Թումանյանի հրատարակ-ված ժողովածուներում հոգևոր երգերի ժողովրդականաց-ված տարբերակներ չենք գտել, սակայն որոշակի առկա են այլ հրատարակություններում²²: Որպես հոգևոր երգի ժող-վրդականացման ամենավառ օրինակ կարելի է նշել Սբ. Ներ-սես Շնորհալու «Առաւօտ Լուսոյ» գիշերային ժամերգության երգը: Այն մինչև հիմա կենցաղավարում է ժողովրդի մոտ՝ հա-ճախ նույնիսկ չկապվելով հեղինակի անվան հետ:

Ժողովրդի մեջ երգվող պարականոն շարականները ինչ-ինչ պատճառներով եկեղեցու կանոնակարգումից դուրս մա-ցած երգային միավորներ են, որոնք շարունակել են ապրել ժողովրդական երգային ավանդույթում:

Այս մասին հիմնավոր աշխատություն ունի Սահակ վար-դապետ Ամատունի²³: Ըստ նրա՝ հայտնի չէ, թե այդպիսի շարականների գործածությունը մինչև երբ է տևել մեր եկե-ղեցում ու դադար առել, կամ ինչ պատճառներով է հերքվել եկեղեցու կողմից: Իր աշխատության մեջ Սահակ Ամատու-նին էջմիածնում գտնվող 73 ձեռագիր Շարակնոցներից առանձ-նացրել ու մանրամասն ծանոթագրել է շուրջ 270 օրինակ պարականոն շարականներ: Ցավոք, եկեղեցին այդ երգերի մեղեդիական նկարագիրը չի պահպանել, և Ամատունու հա-վաքածուում ևս կարող ենք ծանոթանալ նրանց բանաստեղ-ծական տեքստերին միայն:

Ստորև բերված նմուշը ուշ շրջանի պարականոն շարա-կաններից է, այն ձայնագրել է Մ. Թումանյանը 1930-ական թթ.²⁴ Պետրոս Պուռուճյանից²⁴: Երգի հեղինակությունը վերա-գրվում է տիգրանակերտցի Մկրտիչ վարժապետ Տիգրան-յանին, սակայն ինքը՝ Թումանյանը, կասկածի տակ է առնում

²¹ Դրանցից երկու օրինակ պահպանվել է անվանի երգասաց Հայրիկ Մուրադյանի կատարմամբ (տես *Հայրենի երգեր*, Հայրիկ Մուրադյանի ձայ-նից վերծանեց Ալինա Փահլևանյանը, Երևան, «Նոր գիրք» հրատ., 2007, թիվ 89, 90, էջ 107-109): Ինքը՝ Հայրիկ Մուրադյանը, այդ երգերի տեսակն անվանել է *ժողովրդական երաժշտական կատակ*:

²² Ժողովրդական միջավայր անցած հոգևոր երգեր հանդիպել ենք Ք. Կուշնարյանի ղեկավարած գիտաբանական ժամանակ հավաքված Նյութե-րում (*Հայ ավանդական երաժշտություն, պրակ III*):

²³ Ս. Ամատունի, *Հին եւ նոր պարականոն կամ անվաեր շարականներ*, Վա-ղարշապատ, տպ. Ս. Էջմիածնի, 1910:

²⁴ Թումանյան, շԵԲ-3, թիվ 60, էջ 68:

այդ փաստը: «Խորհուրդ մեծ» կոչվող այս օրինակն էական զուգահեռներ ունի Սբ. Մովսես Խորենացուն վերագրվող Սբ. Ծննդյան Առաջին օրվա կարգի «Խորհուրդ մեծ և սքանչելի» Օրհնություն շարականի հետ²⁵, սակայն տեքստային ու մեղեդիական շեղումներով:

ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ

♩ = 60 Պետրոս Պոտուցյան

Մ. Թումաճանի ժողովածուներում կարելի է գտնել պա-րականոն հոգևոր երգերի ինը օրինակ²⁶:

Ժողովրդական հոգևոր երգեր

Մեր դասակարգած երրորդ խմբին պատկանող երգերը Կոմիտաս Վարդապետն անվանում է նաև Տոնական ու Ծի-սական երգեր²⁷: Այդ ժանրի երգերը բազմազան են: Հանդի-պում են զանազան սրբերին՝ Սբ. Աստվածածնին, Սբ. Կա-րապետին (Հովհաննես Մկրտիչ), Սբ. Գրիգոր Նարեկացուն և ուրիշներին նվիրված երգեր: Կան նաև սրբավայրերին նվիր-ված երգեր, օրինակ՝ Սբ. Էջմիածնին, Մշո Սբ. Կարապետ վանքին կամ Մարութա Սբ. Աստվածածին վանքին:

Ժողովրդական հոգևոր երգերի ամենատարածված տե-սակներն են ավետիսները, որոնք երգվում են ժողովրդի մեջ լայն տարածում գտած եկեղեցական տոների ժամանակ: Դրանցից են Սբ. Ծնունդը, Ջատիկը²⁸, Համբարձումը և այլն: Այս ժանրն ուսումնասիրող առանձին աշխատություններ կան²⁹, ուստի նշենք միայն, որ ավետիսները հնագույն ծագում ունեն՝ դարերի ընթացքում քրիստոնեական բովանդակու-թյուն ձեռք բերելով, և որ ավետիսների երգամտածողությունը հարում է մերթ ժողովրդական, մերթ հոգևոր մասնագիտաց-ված ավանդույթին: Եթե որպես հոգևոր ավետիսի տիպական

օրինակ ընդունենք վերևում հիշատակված՝ Սբ. Մովսես Խո-րենացու «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը, ապա դրա հետ համեմատելով՝ կարող ենք բերել հոգևոր երգարվեստի մեղեդիական ոճին որոշ չափով հարազատ մի նմուշ³⁰:

ԱՐԴ ՑՏԱՑԵՔ

Չափավոր
Moderato

Յուրահատուկ տեղ են զբաղեցնում կենցաղային ծեսերին կատարվող ժողովրդական երգերը, մասնավորապես՝ այն-պիսիք, որոնք պատկանում են հարսանեկան ծեսին: Գովքը, օրինանքն ու բարեմադթանքներն անսպակաս են հարսա-նեկան երգերից: Այս ոլորտում կարելի է հանդիպել ինչպես հոգևոր տիպի հիշատակությունների, այնպես էլ հենց հոգե-վոր բովանդակություն և երբեմն էլ նաև հոգևոր երգամտա-ծողություն ունեցող ժողովրդական երգերի:

Վերը նշվածի օրինակ է «Օրհնյալ բարերար Աստված» հայտնի հարսանեկան արղթքը³¹: Այն առանձնանում է ձայն-եղանակային մտածողության նմանակմամբ ու վանկային մեղեդիական ոճով:

ՕՐՆՅԱԼ

ԲԱՐԵՐԱՐ ԱՍՏՎԱԾ

[Քրիստոնեական, Grave religioso]

Ժողովրդական հոգևոր երգերի բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել Կոմիտասի «Ազգագրական ժողովածուում»³² և Մ. Թումաճանի «Հայրենի երգ ու բան» ժողովածուի հատոր-ներում³³:

³⁰ Կոմիտաս, ԵԺ-10, թիվ 22, էջ 55:

³¹ Նույն տեղում, թիվ 50, էջ 67:

³² Կոմիտաս, ԵԺ-9, թիվ 54, էջ 93, թիվ 64, էջ 99, թիվ 110, էջ 119: Կոմիտաս, ԵԺ-10, թիվ 20-25, 28, էջ 55-57, թիվ 50-53, էջ 67-68, թիվ 67, էջ 74, թիվ 94, էջ 81, թիվ 96, էջ 84, թիվ 98, էջ 85: Կոմիտաս, ԵԺ-11, թիվ 77, 79, էջ 48: Կոմիտաս, ԵԺ-12, թիվ 5-7, էջ 20, թիվ 133, էջ 66, թիվ 158, էջ 76: Կոմիտաս, ԵԺ-13, թիվ 45, էջ 50: Կոմիտաս, ԵԺ-14, թիվ 24-26, էջ 49, թիվ 41-42, էջ 54-55:

³³ Թումաճան, շԵԲ-1, թիվ 17-19, էջ 63-65: շԵԲ-2, թիվ 18-19, էջ 43, թիվ 44-45, էջ 79-80, թիվ 50, էջ 83, թիվ 59-63, էջ 96-98, թիվ 139, էջ 165: Թումաճան, շԵԲ-3, թիվ 7, էջ 13, թիվ 10, էջ 17, թիվ 40-45, էջ 45: Թումաճան, շԵԲ-4, թիվ 5, էջ 22, թիվ 114, էջ 131, թիվ 131-133, էջ 154-156:

²⁵ Ձայնագրելի Շարական հոգևոր երգոց, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1875, էջ 66:


²⁶ Թումաճան, շԵԲ-3, թիվ 57-64, էջ 65-72:

²⁷ Կոմիտաս, ԵԺ-10, էջ 54:

²⁸ Ջատիկի ավետիսներ ավելի հազվադեպ են հանդիպում:

²⁹ Տես Մ. Սանուկյան, Ժողովրդական ավետիսներ, Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպ., 1995:

Եթե փորձենք նաև երաժշտական վերլուծության ենթարկել երրորդ բաժինը կազմող հայ ժողովրդական հոգևոր երգերը, ապա պետք է նշենք, որ սրբերին ու սրբավայրերին նվիրված ուխտագնացությունների երգերը հիմնականում չունեն ձայնակարգային, ինտոնացիոն ընդհանրություններ, եթե, իհարկե, չդիտարկենք միևնույն երգի տարբերակները (ասվածը վերաբերում է, օրինակ, Սբ. Կարապետին նվիրված երգերին, որոնք ամենամեծ թիվն են կազմում ուխտագնացության երգերի մեջ): Սակայն, այնուամենայնիվ, որոշակի մեղեդիական նմանություններ կարող ենք գտնել հարսանեկան հոգևոր երգերի երաժշտական նյութն ուսումնասիրելիս: Մասնավորապես, նման են մեղեդիական ոճը (վանկային ու ներվանկային երգեցողության զուգակցում) և հատկապես ձայնակարգային բնութագիրը՝ կվարտային կամ կվարտա-կվինտային հիմքով եղական կառույց՝ բաց թողնված վեցերորդ աստիճանով (այլ կերպ ասած՝ «օդային» սեպտիմայով):



Այս անդրադարձով փորձեցինք նոր տեսանկյունից և նոր համատեքստում դիտարկել հայ ժողովրդական երգերը՝ հոգեվորի դերը հայ ժողովրդական երաժշտության մեջ ցույց տալու նպատակով:

Անշուշտ, այդ երգերը բազմիցս տարբեր տիպի աշխատանքների ուսումնասիրման նյութ են եղել, սակայն նման հետազոտությունները դեռևս քիչ են հայ ֆոլկլորագիտության մեջ:

Յուրաքանչյուր խումբն առանձին բերված օրինակների հիման վրա դիտարկելով՝ եկանք որոշակի եզրակացությունների:

Առաջին խմբում հոգևոր տիպի բանաձևումներն ու հիշատակությունները չեն ազդում երգի ժանրային, բովանդակային բնութագրի վրա: Երբեմն հանդիպում են հոգևոր երգեցողության նմանակումներ, որոնք նույնպես զուտ դետալային նշանակություն ունեն:

Երկրորդ խումբը հիմնովին տարբերվում է մյուս երկու խմբերից, քանի որ այստեղ փաստորեն ականատես ենք հոգևորի յուրացմանը ժողովրդի կողմից: Այստեղ միանշանակ երևում է մեղեդիական կողմի ենթարկումը ժողովրդական մտածողությանը, երբեմն էլ՝ գրաբարյան տեքստի մասնակի փոխարինումը աշխարհաբար գրականով, որը հաճախ ունի նաև բարբառային խառնուրդ:

Երրորդ խումբը կազմող հայ ժողովրդական հոգևոր երգերն ավելի ընդհանրական են՝ մասնավորապես իրենց երաժշտական լեզվամտածողությամբ: Հատկապես հարսանեկան հոգևոր երգերն առանձնանում են հանդիսավոր ծիսական բնույթով և, ինչպես նշվեց վերևում, ունեն ձայնակարգային որոշ նմանություններ:

SPIRITUAL FOLK SONGS IN THE RECORDINGS OF KOMITAS VARDAPET AND MIHRAN TOUMAJAN

Abstract

Lilit Harutyunyan

*Komitas Museum-Institute
Komitas State Conservatory of Yerevan*

The folk songs containing spiritual (religious) elements constitute a great number within Armenian folk songs overall. Church music content may appear in various genres of folklore. While examining this group of folk music samples, I considered the poetic text as the foundation. Consequently, I divided the songs containing spiritual elements into three groups: (1) songs containing only some traits of spiritual theme, (2) professional spiritual songs living among the folk culture and (3) spiritual folk songs. This article focuses on folk songs recorded by Komitas Vardapet and Mihran Toumajan.

Keywords: folklore, spiritual (religious) music, apocryphal *šarakan*, ritual folk genres, music recordings (transcriptions), Komitas Vardapet, Mihran Toumajan.